ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 3 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

## ՊՐՈՖ. ԴՈԿՏՈՐ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.—«ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»

Երևան, Հայպետհրատ, 1944 թ.

*VII դարի հայտնի հայ գիտնականներից աչքի է ընկնում Ա. Շիրակացին իր աշխատություններով։ Դա արդեն հանրածանոթ բան է։ Պարզ է, որ Ա. Շիրակացու աշխատությունների լրիվ ու ստուգված ժողովածուն կազմելը շատ դժվար և միևնույն ժամանակ շատ շնորհակալ աշխատանք է։ Այդ աշխատել է իրականացնել պրոֆ. դոկտ. Աշ. Աբրահամյանն իր «Անանիա Շիրակացու մատենագրությունը» աշխատությամբ։*

*Հաջողվել է արդյոք նրան հարցի բավարար լուծումը։ Ցավոք սրտի պետք է ասել, որ ոչ։ Ա. Շիրակացուն անկասկած պատկանող աշխատությունները հայտնի էին վաղուց, իսկ հեղինակի կողմից նոր երևան բերված հոդվածները մեծ մասով Ա. Շիրակացուն չեն պատկանում։ Բացի դրանից ընկ. Աշ. Աբրահամյանը վերագրելով այդ «նոր աշխատությունները» Ա. Շիրակացուն, ցանկացել է, իբր թե, ավելի ևս ժեծացնել Ա. Շիրակացու հարգն ու նշանակությունը, բայց ստացվել է տրամագծորեն հակառակը՝ նա ստորացրել և, մինչև անգամ, տղայամիտ է դարձրել Ա. Շիրակացուն։ Բերենք մի քանի ցայտուն օրինակներ։ Մենք կանգ կառնենք միմիայն տոմարական և աստղաբաշխական աշխատությունների վրա։ Բայց որպեսզի ոչ մասնագետ ընթերցողին պարզ լինի թույլատրված սխալները, մի քանի խոսքով բացատրենք հարցի էությունը։*

*325 թ. Նիկիա քաղաքի առաջին տիեզերական ժողովում ընդունվեցին քրիստոնեության հիմնական սկզբունքները և եկեղեցական տոների կարգը։ Այդ ժամանակաշրջանում համարյա թե բոլոր քրիստոնյա ժողովուրդները ղեկավարվում էին Հուլյան տոմարով կամ այնպիսի տոմարական սիստեմներով, որոնք արդեն համաձայնեցված էին Հուլյան տոմարի հետ և միմիայն հայ ժողովուրդն էր, որ պահպանել էր իր ազգային հին տոմարը շարժական տարեմտի օրով։ Նիկիայի ժողովից հետո հանձնարարվեց Անդրեաս Բյուզանդացուն կազմել առաջիկա տարիների համար տոների ցուցակը։ Այդպիսին նա կազմեց 200 տարվա համար, որը հավանություն ստացավ և գործի դրվեց, սկսած 353 թվականից մինչև 552-ը ներառյալ։ Քանի որ Անդրեաս Բյուզանդացու ցուցակը կազմված էր այնպես, որ 200 տարին լրանալուց հետո նորից օգտվել նրանով անհնարին էր, ապա 552 թվականից հետո եկեղեցական կյանքում առաջացավ տոմարական շփոթություն։ 561 թ. այդ շփոթությանը վերջ դնելու նպատակով Ալեքսանդրիա քաղաքում (Եգիպտոս) հրավիրվեց 36 մասնագետներից մի հանձնաժողով Իսսի ղեկավարությամբ, որը մշակեց և ընդունեց այսպես կոչված*

532-ամյա շրջանը: Միաժամանակ նույնանման աշխատանք կատարվեց և Իռինի ղեկավարությամբ՝ Բյուզանդիայում, որը նույնպես ընդունեց 532 ամյա շրջանը, բայց առաջինի համեմատությամբ փոքր տարբերություններով: Երկրի ծանր քաղաքական վիճակի պատճառով հայերը չկարողացան մասնակցել այդ հանձնաժողովների աշխատանքներին: Սակայն հայ եկեղեցին էլ հետաքրքրվում էր այդ հարցերով և անտարբեր մնալ չէր կարող: 584 թ. կաթողիկոս Մովսես Եղիվարդեցին այդ հարցը քննելու համար Դվին քաղաքում հրավիրում է հատուկ ժողով: Քանի որ արդեն գոյություն ունեին երկու պատրաստի ցուցակներ, ժողովին մնում էր միայն ընտրել այդ երկուսից մեկը և Դվինի ժողովը հավանություն է տալիս Էասի ցուցակին և աշխատանքների կատարումը հանձնարարում է Աթանաս Տարոնեցուն, Գլակա Ս. Կարապետի վանքի վանահորը, որը համարվում էր հմուտ և գիտուն տոմարագետ: Աշխատանքն այն էր, որ Էասի ցուցակի տոնական օրերը պետք է տրվեին հին հայկական շարժական տոմարի ամսաթվերով, սկսած 552 թվականից (Հուլյան տոմարի ամսաթվերի փոխարեն, որպիսին հայ ժողովուրդը չէր ընդունում): Աթանաս Տարոնեցին շատ հաջող կերպով կատարում է այդ աշխատանքը և նրա կազմած ցուցակով հայերը ղեկավարվում էին մինչև 551+532=1083 թ. ներառյալ: Մենք տեսնում ենք, որ այդ բոլոր աշխատանքները կատարվեցին մինչև VI դարի վերջը, երբ Ան. Շիրակացին դեռ ծնված չէր: Այսպիսով 552-ից սկսած նոր հայկական դարագլուխ ընդունելու և 532-ամյա շրջանի առաջին ցուցակ կազմելու հետ Ան. Շիրակացին ոչ մի առնչություն ունենալ չէր կարող: Այդ կարծիքին էր և ինքն Ան. Շիրակացին, որն իր տոմարական աշխատության Հր գլխում գրում է, որ Հուստինիանոս կայսրի թագավորության 34-րդ դարում Անդրեասի ցուցակը լրանալուց հետո եկեղեցական առաջնորդները կարգեցին այլ յարմարումն քուոց և տօնից ճանապարհ անմոլար... Արդ մերումն կարգեցան այն ամն թուականն ժ և այն ժողովեցան մինչև ցայս ամս:[1] Նույնը Ան. Շիրակացին ասում է 3—4 այլ գլուխներում:

Ընկեր Աշոտ Աբրահամյանը ճիշտ մոտեցում է ցուցաբերել 1940 թ. «Տիեզերագիտություն և տոմար» աշխատությունը լույս ընծայելիս: Եվ անհասկանալի է թե ինչպես է նա իռեն թույլ տվել Ան. Շիրակացուն վերագրելու հայոց թվականության հիմնադրման հեղինակությունը,[2] երբ մինչև անգամ տոմարական հարցերին թեթևակի ծանոթ մարդու համար էլ պարզ է, որ այդ բռնազբոսիկ կլիներ: Սխալը բռնելու ամենապարզ ձևը հետևյալն է. հայերի մոտ Հայտնության տոնը միշտ եղել է անշարժ—հունվարի 6-ին: Այն ինչ Շիրակացուն վերագրվող «Տոմարական պատառիկում» հայտնության օրը չորս տարին մեկ օրով առաջ է խաղում, որը յուրահատուկ էր միմիայն հին շարժական հայկական տոմարին: Այստեղից բխում է երկրորդ հարցը, որը մենք ցանկանում ենք առաջադրել ընկ. Ա. Աբրահամյանին. բոլոր հայ պատմագիրները նշում են, որ Անաստաս պատրիարքի (մոտ 668 թ.) հանձնարարությամբ Ան. Շիրակացին հին հայկական շարժական տոմարը վե-

[1] Տես «Ուսումնասիրության հիմնական եզրակացությունները», կետ 21, էջ 178 և «ՇԼԲ բոլորակ Անանիայի Շիրակացւոյ համարողի», էջ 262—281:

[2] Տես «Տիեզերագիտություն և տոմար», Հայպետհրատ, 1940 թ. աշխատ. պատմ. գիտ. թեկն. Աշ. Աբրահամյանի:

բածեց անշարժի, որը, սակայն, կյանքում չիրագործվեց։ Ապա ինչպես եղավ, որ Ա. Շիրակացու անշարժ տոմարի պատառիկի փոխարեն մեզ հասավ նրանից շարժական տոմարի պատառիկ։

Ընկ. Աշ. Աբրահամյանը թյուրիմացության մեջ ընկնելով՝ Աթանաս Տարոնեցու աշխատությունը վերագրել է Ան. Շիրակացուն։ Նույնպիսի թյուրիմացության հետևանքով Ան. Շիրակացուն է վերագրված և «այլ ժողովուրդների տոմարի պատճենները», որը հենց առաջին ցուցակից «ամիսք հոռոմոց և յարկայր» պարզ երևում է, որ դա XII դարից ոչ վաղ գրված մի աշխատանք է. հայկական նավասարդ ամիսը համընկնում է հռոմեական օգոստոս ամսվա հետ և տրված են «ամիսք արարացւոց» ու «ամիսք տաճկաց», որոնց մասին Ա. Շիրակացին գաղափար ունենալ չէր կարող (էջ 116—122)։

Այդ սխալը ևս ցայտուն կերպով աչքի է ընկնում այսպես կոչված «Տվերաչափության ժամացուցակները» գլխում (էջ 123—126)։

Առաջին երկու շրջանակներում տրված են հայկական ու հռոմեական ամիսների համապատասխանությունը հետևյալ կերպ.

| | | | |
|---|---|---|---|
| արաց | մեհեկի | աբե | |
| յունուար | փեբրուար | մարտ | և այլն |

դա կարող էր միայն լինել Հովհ. Սարկավագից հետո (այսինքն XI դարից հետո)։ Նույնը ապացուցվում է և նշանակած ամենակարճ տվերի ժամկետով՝ յունիս–մարգաց. այն ինչ Ան. Շիրակացին ցույց կտար նավասարդ ամսվա համար՝ նրա ժամանակ հայկական նավասարդը համընկնում էր հունիս ամսվա հետ։

Մենք կանդ առանք տոմարական մի քանի գլխավոր և կոպիտ սխալների վրա, բայց նույնը կարելի է կրկնել բոլոր «առմարական» կտորների մասին։ Սխալը, իհարկե, Ան. Շիրակացունը չէ, այլ ընկ. Աշ. Աբրահամյանինը, որը աններելի կերպով ամեն ինչ վերագրել է նրան՝ լինի դա VI դարի կամ XII դարի աշխատանք։

Անցնենք աստղաբաշխականին։ Երբ 1940 թ. լույս տեսավ ընկ. Ա. Աբրահամյանի «Տիեզերագիտություն և տոմար» աշխատությունը, մենք ողջունեցինք այդ, հաշվի առնելով, որ դա հանդիսանում է իրոք Ան. Շիրակացու աշխատության հարազատին մոտ տեքստը, և որ այդ տեքստով վերացվում էին այն սխալները, որոնք գոյություն ունեին պրոֆ. Ֆ. Պատկանյանի «Մնացորդք բանից» բերած տեքստում։ Սակայն իր նոր աշխատության մեջ ընկ. Ա. Աբրահամյանը նորից կրկնում է Պատկանյանի տեքստը, որպես նոր հայտարերված։ Հարց է ծագում, ինչ կարիք կար Պատկանյանի աշխատությունը դատել երկու մասի և առանձին-առանձին հրատարակել։ Ճիշտ է, պրոֆ. Պատկանյանի տեքստում մոտ տասը նախադասություն բավարար տրված չէ։ Բայց լավ չէ՞ր լինի արդյոք քննադատական կերպով ուղղել և լրացնել պրոֆ. Պատկանյանի տեքստը, քանի որ դեռ ստուգված չէ, թե ով է ավելի ճիշտ կարդացել տեքստը՝ ընկ. Ա. Աբրահամյանը, թե պրոֆ. Ֆ. Պատկանյանը։

Ահա այդ լրացուցիչ և կասկածելի գլուխներն են, որոնք Ա. Շիրակացու դերը գիտության ասպարեզում նսեմացնում են և նրան պակե-

քում որպես անհասկացող մեկի, որը կրկնում է բառերը առանց հասկանալու նրանց իմաստը։ Բերենք երկու օրինակ, որպեսզի ինքը ընթերցողը կարողանա դատել.

1) ա. Գիշերվա մթության մասին Ան. Շիրակացին տալիս է լակոնական ձևի գիտական բացատրություն. «ստուերք երկրի պատճառ է գիշերոյն»... («Տիեզ. և տոմար», էջ 54)

բ. «Արեգակը մայր մտնելիս ծածկվում է խավար օդով այնքան ժամանակ, մինչև գալիս է լուսավոր օդը և ցրում խավարը» (Ան. Շիր. մատենագր., էջ 113)։

2) ա. Ան. Շիրակացին երգիծաբանորեն կծու կերպով ծաղրանքի է ենթարկում բոլոր տիպի աստղագետներին (астрологов). «քանզի վրիպեալ զարտուղին խորհուրդք նոցա բազմութեամբ երազախաղաց ժամունքն իւրեանց. զի երազութիւն երազափոխան աղգութեանց նոցա յապուշ և յիմարութիւն կործանեաց զնոսա, և լինելոյ յայպն կատականաց զատարկացոյց մշտնջենաւորութեան ի սնոտիս։ Եւ ես զարմանամ թէ զի՞արդ այնպէս զատարկացեալք ի գործոյ են միշտ զհետ սնոտեաց առանց ամօթոյ և պատկառութեան»[1]...

բ. Փայլածուն յորժամ զվարսն ցուցանէ, զոր ոմանք գիսավոր կոչեն, և առնու զդէսսն իբրև գգալի, զի գլոյսն յինքն առնու, մեծ պատերազմունք և արիւնհեղութիւնք գան երկրի. և տագնապ յոր և իցէ» կամ «խոյն, յորում են աստեղք եւթն, եթէ հայիս և տեսանիս զեւթն և զչորս այլ զուգեալ առ իրեարս, գիտասջիր՝ զի եկեալ հասեալ են թշնամիք և զքեզ պատեալ, և գիտասջիր՝ զի խաղաղութեան Ծաս»[2] և այլն։

«բծով նշանակված են ընկ. Աշ. Աբրահամյանի 1940 թվից հետո «նոր հայտնաբերված» տեքստերը։

Ընկ. Ա. Աբրահամյանը ցանկանալով տալ Ան. Շիրակացու աշխատությունների լրիվ ժողովածուն, չի կարողացել հաղթահարել առաջ եկած դժվարությունները և հարցն այնպես է խճողել, որ նորից Ան. Շիրակացու ավտորիտետը վերականգնելու համար անհրաժեշտ է երկար տարիների լուրջ աշխատանք։

Պրոֆ. Լ. ՍԻՄՑՈՆՈՎ

[1] Տես «Տիեզ. և տոմար» էջ 19—31։

[2] Տես «Ան. Շիրակացու մատենագր.», էջ 331—332 և այլն։